ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

,, 27 ,, օգոստոսի 2014թ. N 186-Ա

ՊԱՐԳԵՎ ԱՍԱՏՈՒՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի, 14-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի>> 34-րդ կետի պահանջը

կարգադրում եմ՝

1. <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված Պարգև Ասատուրի Հակոբյանի հետ ս/թ օգոստոսի 27-ից, հինգ տարի ժամկետով, կնքել աշխատանքային պայմանագիր՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ